



Armenia



Բազմաբնակարան շենքերի ջերմամատակարարման կազմակերպման կառավարման մարմինների

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ֆինանսավորող՝

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջերմամատակարարման
էներգաարդյունավետության բարձրացում» UNDP/GEF 00035799 ծրագիր

Պատասխանատու իրականացնող՝ «Համատիրության
սեփականատերերի ազգային ասոցիացիա» ՀԿ (NACO)

Երևան 2007

Խորհրդատվական կենտրոնի նպատակն է՝

Աջակցել բազմաբնակարան շենքերի սեփականատերերին, կառավարման մարմիններին և համայնքներին, նպաստելով բազմաբնակարան շենքերում ընդհանուր (բաժնային) գույքի առավել արդյունավետ կառավարմանը և կոմունալ ծառայությունների՝ մասնավորապես ջերմամատակարարման, բարելավմանը:

Խորհրդատվական կենտրոնի խնդիրներն են՝

Խրախուսել և աջակցել ջերմամատակարարման նախագծերի իրականացմանը, տրամադրելով խորհրդատվություն բազմաբնակարան շենքերի սեփականատերերին, կառավարման մարմիններին, համայնքներին, ծառայություններ մատուցողներին և մասնավոր ներդրողներին.

- աջակցություն ջերմամատակարարման նախագծերի ընտրությանը, նախագծերի և գործարար ծրագրերի մշակմանը
- աշխատանքային խորհրդակցությունների և քննարկումների կազմակերպում բացահայտված խոչընդոտների վերացման նպատակով
- շահառուների կողմից առաջադրված խնդիրների լուծում՝ կենտրոնի անձնակազմի մասնագիտական ունակությունների, իսկ անհրաժեշտության դեպքում, այլ համագործակից կազմակերպությունների օգնությամբ
- բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և ջերմամատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հարաբերություններում խոչընդոտների հաղթահարմանն ուղղված խորհրդատվության տրամադրում
- բազմաբնակարան շենքերի ջերմամատակարարման կազմակերպման և համակարգերի շահագործման վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում
- խորհրդատվություն և աջակցություն բազմաբնակարան շենքերի կառավարման և պահպանման հարցերում
- աջակցություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորմանը և նրանց կողմից ջերմամատակարարման ծառայությունների արդյունավետ կազմակերպմանը

- Երևանից դուրս գտնվող համատիրությունների և այլ շահառուների համար խորհրդատվության ապահովում և տեխնիկական աջակցություն՝ գործընկեր կազմակերպությունների, էլեկտրոնային փոստի և արտագնա ուսուցումների կազմակերպման միջոցով
- խորհրդատվական կենտրոնի նոր շահառուների բացահայտում:

Կենտրոնի հիմնադրման պահից խորհրդատվական ծառայություններ են մատուցվել.



Շահառուների հավաք Միջազգային բիզնես-կենտրոնի դահլիճում

Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների գործունեության կոմունալ ծառայությունների մատուցման բարելավման (մասնավորապես ջեռուցման), ինստիտուցիոնալ, օրենսդրական և հարկային դաշտերի վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ են մատուցվել **թվով 122** շահառուների, այդ թվում.

- ✓ բազմաբնակարան շենքերի բնակարանատերեր՝ **25**
- ✓ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ՝ **52**
- ✓ մասնավոր ջերմամատակարար կազմակերպություններ՝ **11**
- ✓ այլ կազմակերպություններ՝ **34**

Մշակվել են ԲԲՇ-ների տեղեկատվական շտեմարաններ՝



Բազմաբնակարան շենքեր Քաջարանում

Երևան քաղաքի.

1. Ավան համայնքում՝ 219 շենք
2. Դավիթաշեն համայնքում՝ 173 շենք
3. Շենգավիթ համայնքում՝ 599 շենք
4. Քաջարան քաղաքում՝ 75 շենք

Հեռարձակվել են՝ 11 հեռուստատեսային և 9 ռադիոհաղորդումներ

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջերմամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» UNDP/GEF 00035799 ծրագրի, խորհրդատվական ծառայությունների, ինչպես նաև ՀՀ-ում ջերմամատակարարման վերականգնման այլ ծրագրերի մասին Երևան TV հեռուստատալիքը պատրաստել և երեք անգամ հեռարձակել է 40 րոպեանոց հաղորդում:

- ✓ Խորհրդատվական ծառայությունների, համատիրությունների պարտականությունների, գործունեության, վերակազմավորման մասին հեռարձակվել է հաղորդում Երևան TV հեռուստատալիքի «Իմ Երևան» ծրագրով: Հաղորդումը կրկնվել է երեք անգամ:
- ✓ «Երևան TV» -ի լրագրողն անց է կացրել հարցազրույց քաղաքային ջեռուցման վերականգնման ծրագրի մասին:
- ✓ «Ռադիո Երևանի» կողմից անց է կացվել է հարցազրույց և պատրաստվել է ռադիոհաղորդում «Կոմունալ ծառայությունների մատուցման (մասնավորապես ջեռուցման) բնագավառում կառավարման մարմինների դերը» թեմայով:
- ✓ Խորհրդատվական ծառայությունների մասին հեռարձակվել է հաղորդում Երևան TV հեռուստատալիքի «Իմ Երևան» ծրագրով:
- ✓ Խորհրդատվական ծառայությունների մասին տեղեկատվություն է հաղորդվել «Կենտրոն» հեռուստատեսային ընկերության միջոցով:
- ✓



Խորհրդատվական ծառայություն-ների մասին հաղորդվել է տեղեկատվություն հեռուստա-տեսային յոթ և մեկ ռադիո ընկերությունների միջոցով:

Տպագրվել է՝ 12 հոդված՝

Հայաստանի Հանրապետություն, Իրավունք, Ավագանի +, ԱԶԳ և այլ թերթերում: Տեղեկատվություն է տարածվել Մեդինֆորմ, Արմեն Պրեսս գործակալությունների միջոցով:

Մշակվել է՝

1. Խորհրդատվական ծառայությունների կենտրոնի **կանոնակարգը**
2. Բնակելի շենքերի արդյունավետ ջեռուցման կազմակերպման **ուղեցույց** (ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» և ԱՄՆ ՄՁԳ «Մունիցիպալ էներգախնայողության ցանց» ծրագրերի շրջանակներում «Էներգախնայողության Ալյանս»

միջազգային կազմակերպության Հայաստանյան գրասենյակի կողմից)

3. Կոմունալ ծառայությունների զարգացման ծրագրերին անապահով ընտանիքների մասնակցությունն ապահովելու նպատակով կատարվել է մի շարք երկրների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, Էստոնիայի, Լեհաստանի, փորձի ուսումնասիրություն և մշակվել և ներկայացվել է **«Բնակարանային կոմունալ նպաստների ծրագրի» նախագծի առաջարկ**։
4. Մշակվել է **ուղեցույցի նախագիծ**, նվիրված բնակելի շենքերի ջերմամեկուսացման խնդիրներին։

Իրականացվել է սոցիոլոգիական 6 հարցում.

1. ԲԲՇ կառավարման մարմինների կարիքների գնահատում – 45 մասնակից։
2. Արաբկիր 51/3 և 51/9 շենքերի կաթսայատան վերազինման մասին բնակիչների կարծիքի ուսումնասիրություն – 48 մասնակից։



Բազմաբնակարան շենք Դավիթաշենում

3. Ջերմամատակարարման ինստիտուցիոնալ դաշտի վերափոխման անհրաժեշտության մասին – 10 մասնակից։
4. Քաջարանի ԲԲՇ-ների ջեռուցման վերականգնման մասին բնակչության կարծիքի ուսումնասիրություն -111 մասնակից։
5. Ռուբինյանց 5 կաթսայատան վերականգնման մասին բնակչության կարծիքի ուսումնասիրություն -75 մասնակից։
6. Կոմիտաս 14, 16 հասցեներում կաթսայատնից ստացվող ջեռուցումը վերականգնելու բնակիչների ցանկությունը պարզելու, նպատակով – 64 մասնակից։

Իրականացվել է մոնիտորինգ Գյումրի քաղաքում՝

1. Երևանյան խճուղի 155ա և 109ա շենքերում, որտեղ տեղադրված են բնակարանային ջեռուցման «Ariston» կաթսաներ և MORA 6101 տիպի բնակարանային վառարաններ,

2. Երևանյան խճուղի 157ա շենքում, որի կենտրոնացված ջեռուցումն իրականացվում է շենքի տանիքում կառուցված կաթսայատնից:



Գյումրի քաղաքի Երևանյան 109ա բազմաբնակարան շենքը



Գյումրի քաղաքի Երևանյան 157ա բազմաբնակարան շենքի կաթսայատունը

***Կազմակերպվել են՝
Հավաքներ (թվով 6)***



Հավաք Ավանի քաղապետարանում

1. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ղեկավարների, տեղական ինքնակառավարման մարմինների, բնակարանային և կոմունալ ոլորտի պատասխանատուների համար՝ Միջազգային բիզնես կենտրոնի դահլիճում - 100 մասնակից:
2. Ավան համայնքի բնակ կոմունալ ոլորտի պատասխանատուների, ԲԲԸ կառավարիչների համար – 42 մասնակից:
3. Դավիթաշեն համայնքի բնակկոմունալ ոլորտի պատասխանատուների, ԲԲԸ կառավարիչների համար – 28 մասնակից:
4. Երևանի քաղաքապետարանի կաթսայատներ և կենտրոնացված ջերմային հանգույցներ վարձակալած կազմակերպությունների ներկայացուցիչների համար՝ Խորհրդատվական կենտրոնում - 17 մասնակից:

5. Հանդիպում-ժողով «Ռուբինյանց 5» կաթսայատան հարևան երեք շենքերի բնակարանատերերի հետ՝ վարկային ծրագրի իրականացման խոչընդոտների հաղթահարման նպատակով - 24 բնակիչ:
6. Հանդիպում Շենգավիթ համայնքի ղեկավարի տեղակալի, համատիրությունների նախագահների, բնակկոմունալ բաժնի աշխատակազմի հետ – 21 մասնակից:

Կլոր սեղաններ (թվով 5) նվիրված՝

1. Փորձնական ծրագրերի իրականացման ընթացքին՝ մասնավոր ջերմամատակարարող կազմակերպությունների, համատիրությունների և ջեռուցման ծրագրերի փորձագետների մասնակցությամբ – 10 մասնակից:



Վարձակալված կաթսայատների վերագործարկման աշխատանքների ընթացքի քննարկում խորհրդատվական կենտրոնում

2. Վարձակալված կաթսայատների վերագործարկման աշխատանքների ընթացքին – 11 մասնակից:
3. Ռուբինյանց 7 կաթսայատան վերականգնման հնարավորությանը – 9 մասնակից:
4. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից Հայգյուղփոխբանկին հատկացված ֆինանսական միջոցներից բնակարանային ջեռուցման նպատակով վարկերի տրամադրման պայմաններին:


5. «Ջերմամատակարարման վերականգնման վարկային միջոցների տրամադրման մեխանիզմների և փոքր հզորության կենտրոնացված ջեռուցման համակարգերի հաշվարկի համակարգչային ծրագրի» ներկայացմանը: «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Էրատո թագուհի» դահլիճում՝ 76 մասնակից:



Ջեռուցման համակարգերի հաշվարկի հա-

*մակարդչային ծրագրի ներկայացումը
«Արմենիա Մարիոթ» հյուրանոցի «Էրատո
թագուհի» դահլիճում:*

Մենք պատրաստ ենք համագործակցել այլ կազմակերպությունների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների, մասնավոր ձեռներեցների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ:



Խորհրդատվության և տեղեկատվության համար դիմել՝

Երևան, Թումանյան 8, 4-րդ հարկ,

սենյակներ՝ N 28, 29, 30

Հեռ.՝ 58 96 25

Էլ.-փոստ՝ naco@web.am

Կայք՝ <http://www.heating.nature-ic.am>

Կենտրոնը աշխատում է ամեն օր (բացի շաբաթ-կիրակի օրերից)

Աշխատանքային ժամերն են՝ 09:00-18:00

Ընդմիջում՝ 13:00-14:00